

"Համայնքային ծառայության մասին" ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ մաս  
Հայտատու՝ ՀՀ Սյունիքի մարզի Ծավի համայնքապետարան

## **ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

### **ՀՀ Սյունիքի մարզի Ծավի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու նպատակով մրցույթ անցկացնելու մասին**

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Ծավ համայնքի /այսուհետ՝  
Համայնք/ ղեկավարը հայտարարում է մրցույթ Հայաստանի Հանրապետության Սյունիքի  
մարզի Ծավի համայնքապետարանի աշխատակազմի /այսուհետ՝ Աշխատակազմ/  
համայնքային ծառայության հետևյալ թափուր պաշտոնը զբաղեցնելու համար.

### **Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Ծավի համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ-հաշվապահ (ծածկագիր 3.1-1)**

Իրականացնում է Աշխատակազմի հաշվապահական հաշվառման գործառույթները,  
կազմում է ֆինանսական հաշվետվությունները, ապահովում է հաշվապահական  
հաշվառման մասին օրենսդրության պահանջների կատարումը: Իր լիազորությունների  
շրջանակներում պատասխանատվություն է կրում հաշվապահական հաշվառումը ՀՀ  
օրենսդրությամբ սահմանված կարգով վարելու, ֆինանսական հաշվետվությունները  
ժամանակին ու ճիշտ կազմելու համար: Կատարում է Աշխատակազմի քարտուղարի  
հանձնարարությունները: Իր լիազորությունների սահմաններում, անհրաժեշտության  
դեպքում, նախապատրաստում և Աշխատակազմի քարտուղարին է ներկայացնում իր  
աշխատանքային ծրագրերը, ինչպես նաև առաջարկություններ, տեղեկանքներ,  
հաշվետվություններ, միջնորդագրեր, զեկուցագրեր և այլ գրություններ:

### **Նշված թափուր պաշտոնը զբաղեցնելու համար պահանջվում է.**

Առնվազն միջնակարգ կրթություն, Հայաստանի Հանրապետության Սահմանադրության,  
«Համայնքային ծառայության մասին», «Տեղական ինքնակառավարման մասին»,  
«Իրավական ակտերի մասին», «Հաշվապահական հաշվառման մասին», «Հայաստանի  
Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության  
օրենքների Հայաստանի Հանրապետության օրենքների, Աշխատակազմի կանոնադրության  
և իր լիազորությունների հետ կապված այլ իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն,  
ինչպես նաև տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն.  
անհրաժեշտ տեղեկատվության տիրապետում, համակարգչով և ժամանակակից այլ  
տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն:

**Մրցույթը կանցկացվի 2016 թվականի մարտի 18-ին ժամը 11.00-ին  
Աշխատակազմի զբաղեցրած շենքում (հասցե՝ ՀՀ Սյունիքի մարզ, գյուղ Ծավ):**

Մրցույթին մասնակցելու իրավունք ունեն ՎՎ քաղաքացիները և Հայաստանի Հանրապետությունում փախստականի կարգավիճակ ունեցող անձինք /այսուհետ՝ քաղաքացիներ/:

**Դիմող քաղաքացիները պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը՝**

դիմում մրցույթային հանձնաժողովի անունով /ձևը լրացվում է փաստաթղթերը ներկայացնելիս/, տվյալ պաշտոնն զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների տիրապետման տեսանկյունից ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի դիպլոմի/ների/, վկայականի/ների/ պատճենները՝ բնօրինակների հետ միասին, արական սեռի անձինք նաև զինվորական գրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայականի պատճենը՝ բնօրինակի հետ միասին, կամ համապատասխան տեղեկանք, մեկ լուսանկար՝ 3X4 սմ չափսի, անձնագրի պատճենը:

Քաղաքացիները մրցույթին մասնակցելու համար փաստաթղթերն իրենց ցանկությամբ Աշխատակազմ կամ ՎՎ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄՎ վարչություն են հանձնում անձամբ՝ ներկայացնելով անձնագիր: Քաղաքացիները մրցույթին ներկայանում են անձնագրի, դիպլոմի, աշխատանքային գրքույկի, իսկ արական սեռի անձինք՝ նաև զինվորական գրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայականի բնօրինակներով:

Փաստաթղթերն ընդունվում են ամեն օր ժամը 9.00-ից մինչև 18.00-ը, բացի շաբաթ, կիրակի և մյուս ոչ աշխատանքային օրերից:

**Դիմումների ընդունման վերջին ժամկետն է՝ 2016 թվականի փետրվարի 29-ը, մինչև ժամը 18.00:**

Մրցույթին մասնակցել ցանկացող քաղաքացիները փաստաթղթեր հանձնելու, լրացուցիչ տեղեկություններ ստանալու, ինչպես նաև պաշտոնի անձնագրին և հարցաշարերին ծանոթանալու համար կարող են դիմել Աշխատակազմ (հասցե՝ ՎՎ Սյունիքի մարզ, գյուղ Ծավ հեռ.՝ 094-451602) կամ ՎՎ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄՎ վարչություն (հասցե՝ ք.Կապան, Գ.Նժդեհի 1. Հեռ.՝ 0285-23550):

**ՎՎ Սյունիքի մարզի Ծավ համայնքի ղեկավար՝ Ս.Զաքարյան**

Էլ-փոստ՝ [tsav.syuniq@mta.gov.am](mailto:tsav.syuniq@mta.gov.am)